ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Արմավիրի մարզի Երասխահուն գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության 1-ին կարգի մասնագետի (ծածկագիր 3.2-2) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:

-Քարտուղարի հանձնարարությամբ կատարում է համայնքի բնակիչների ամենամյա սեռա-տարիքային հաշվառման աշխատանքները, կազմում և ներկայացնում ե հաշվետվությունները.
–Քարտուղարի հանձնարարությամբ կատարում է համայնքի ընտանի կենդանիների և թռչունների, ինչպես նաև մեքենա-մեխանիզմների հաշվառման աշխատանքները,կազմում է հաշվետվությունները.

-–Քարտուղարի հանձնարարությամբ կատարում է համայնքի ցանքատարածությունների և բազմամյա տնկարքների մասին պահանջվող բոլոր հաշվետվությունները.

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում են.

_առնվազն միջնակարգ կրթություն

-սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի բ) ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն

-համագարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն

-տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում

Մրցույթը կկայանա 2015թվականի Նոյեմբերի 18-ին ժամը 12.00-ին Երասխահունի գյուղապետարանի շենքում (հասցեն՝ գ . Երասխահուն փողոց N1 շենք N 9):

Մրցույթին մասնակցելու համար դիմող անձիք Երասխահունի գյուղապետարանի աշխատակազմ պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

1.Դիմում մրցութային հանձնաժողովի անունով (ձևը լրացվում է փասթաթղթերը ներկայացնելիս):

2.Տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փասթաթղթերի բնօրինակները պատճեների հետ միասին:

3.Հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում ՀՀ 2005թվականի մարտի 3-ի N10-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով:

4.Հայտարարություն այն մասին, որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ:

5.Արական սեռի անձինք՝ զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասային կցագրման վկայականի պատճենը:

6.Այլ պետությունների քաղաքացիները ՀՀ-ում աշխատելու իրավունքի փասթաթուղթ:

7.Անձնագրի պատճեն.

8.Սոցիալական քարտի պատճեն:

9.Ինքնակենսագրություն:

10.Մեկ լուսանկար 3x4 չափսի

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարերին ծանոթանալու համար դիմել Երասխահունի գյուղապետարանի աշխատակազմ (հեռախոս 093-01-01-09) կամ Արմավիրի Մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն (հասցեն՝ ք. Արմավիր, Աբովյան-71, հեռախոս 0237-2-76-49)

Փասթաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը՝ 10.00-ից մինչև 16.00-ն, բացի ոչ աշխատանքային օրերից: Դիմումների ընդունման վերջնաժամկետն է 2015թվականի Հոկտեմբերի 30-ը:

ԵՐԱՍԽԱՀՈՒՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ